ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի գործունեության ակունքները գալիս են դեռևս Առաջին Հանրապետության և ԽՍՀՄ ՆԳՄ միլիցիայի հատուկ նշանակության դպրոցի ստեղծումից և հասնում մինչև մեր օրեր: Հայերենում ոստիկան բառն ունի պահլավական ծագում, որի իմաստը <<**հավատարիմ**>>-ն է, և այն որպես պաշտոն շնորհվել է հավատարիմներին, ովքեր անկողմնակալ կատարել են իրենց առջև դրված խնդիրները: 1919թ.-ի Դեկտեմբերի 4-ին ՀՀ ՆԳՄ մինիստրի համար 500 հրամանով Զոհրաբ Բագրևանդյանը նշանակվել է նորաստեղծ միլիցիայի դպրոցի պետ-դասախոս: Դեռևս այդ ժամանակներից կազմված ուսումնական ծրագրերում առանցքային դեր է տրվել շարային պատրաստականության պարապմունքներին: <<Զինվորական կրթություն և միլիցիոներական փոխհարաբերություններ և իրավասություններ>> ինչպես նաև <<միլիցիոներական ներքին կանոնադրություն>> առարկաները հիմք են հանդիսացել շարային հետգայում նաև ծառայության՝ որպես առանձին ստորաբաժանման ստեղծման համար: 1965թ.-ին Ստեղծվել է ԽՍՀՄ ՆԳՄ Միլիցիայի Երևանի միջնակարգ մասնագիտական դպրոցը Հրաչիկ Պետրոսյանի ղեկավարությամբ: 1991թ-ի Հոկտեմբերի 20-ին ՍՍՀՄ ՆԳՄ բարձրագույն իրավաբանական հեռակա դպրոցի Երևանի ֆակուլտետի պետի հրամանով միլիցիայի փոխգնդապետ Սուրեն Ցոլակի Գևորգյանը նշանակվել է ֆակուլտետի մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի պետ, ինքը և ֆակուլտետի պետի օգնական շարային մասով: 1994թ-ից ՀՀ ՆԳՆ Երևանի բարձրագույն դպրոցի պետի ծառայության գծով տեղակալ է եղել Վ. Պետրոսյանը, և այդ ժամանակներից սկիզբ է դրվում ՆԳՆ Բարձրագույն դպրոցի ծառայության բաժնի՝ որպես առանձին ստորաբաժանման գործունեությունը: Բոլոր ժամանակներում ծառայության բաժնի առջև դրված են եղել հետևյալ խնդիրները. շարային պատրաստականության պարապմունքների անցկացում, ոստիկանի համազգեստի կրման կանոնների պահպանում, զինվորական կարգապահության ապահովում, ոստիկանի էթիկայի կանոնների պահպանում, զինվորական և ծառայողական աստիճանականության պահպանում և մի շարք այլ խնդիրներ: Ներկայումս ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի պետը ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ ոստիկանության գնդապետ Արշալույս Գալոյանն է: